ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քառուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

VII

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ՀԱԿՈԲ ՉՈԼԱՔՅԱՆ – 75

Բազմաբեղուն է 75-ամյա վաստակաշատ մանկավարժ, լեզվաբան, ազգագրագետ, բանագետ, բանահավաք, բանասեր, հրապարակախոս, պատմական գիտությունների դոկտոր Հակոբ Չոլաքյան գիտնականի վաստակը: Նրա ծանրակշիռ գիտական հետազոտություններն ու գրական, հրապարակախոսական գործերն ամփոփված են տարբեր բնագավառների շուրջ 60 աշխատություններում, պարբերականներում տպագրված շուրջ 40 գիտական հոդվածներում, համացանցային գրառումներում, ակնարկներում, ավելի քան 200 պատմվածքներում ու գեղարվեստական ակնարկներում, գիտական ու մանկավարժական զեկուցումներում և ուսումնասիրություններում:

Հակոբ Մարտա-Աբրահամի Չոլաքյանը ծնվել է 1947 թ. հոկտեմբերի 16-ին Սիրիայի Քեսապի շրջանի Գարատուրան գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Ազգային Մեսրոպյան նախակրթարանում (1954–1961 թթ.), ապա Քեսապի Հայ ավետարանական Նահատակաց նախակրթարանում (1961–1963 թթ.): 1963–1968 թթ. Հ. Չոլաքյանը սովորել է Այնճարի (Լիբանան) Հայ ավետարանական երկրորդական վարժարանում: 1968–1969 թթ. այս նույն վարժարանում աշխատել է որպես ուսուցիչ: 1969–1970 թթ. եղել է Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող: Հ. Չոլաքյանը 1970 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Երեք տարի սովորել է ԵՊՀ-ում և այդ ընթացքում բարեհաջող հանձնել հնգամյա կուրսի բոլոր քննությունները, 1973 թ. ստացել է բանասերի և հայոց լեզվի ու գրականության ուսուցչի որակավորում և վերադարձել Այնճար:

1973–1976 թթ. եղել է Այնճարի Հայ ավետարանական, Բեյրութի ՀԲԸՄ-ի Երվանդ Տեմիրճյան և Ազգային Խանամիրյան վարժարանների հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչ: 1976 թ. Բեյրութում սկսված քաղաքացիական կռիվների պատճառով Հ. Չոլաքյանը տեղափոխվել է Սիրիա և աշխատանքի

անցել Հալեպի Քարեն Եփփե ճեմարանում՝ միաժամանակ դասավանդելով Հալեպի Մխիթարյան վարժարանում ու Մխիթարյան հայագիտական ամբիոնում: 1976–2012 թթ. եղել է Հալեպի Ազգային Քարեն Եփփե ճեմարանի երկարամյա ուսուցիչը, 1996–2012 թթ.՝ Հալեպի Համազգայինի Հայագիտական ուսումնական հաստատության հայերենի դասախոսը: Ուշագրավ է, որ նա համատեղել է Այնճարի Հայ ավետարանական վարժարանի «Շիրազ», ապա Քարեն Եփփե ճեմարանի «Ծիլեր» աշակերտական պարբերաթերթերի պատասխանատու խմբագրի աշխատանքը՝ դրանք դարձնելով հայ գրին ու մշակույթին ծառայող մատաղ սերնդի ինքնարտահայտման յուրահատուկ հարթակ ու խոսափող:

Սիրիայում իսլամիստ ծայրահեղականների սանձազերծած քաղաքացիական պատերազմի և Հալեպի գնդակոծությունների ու անապահով իրավիճակի պատճառով Հ. Չոլաքյանը 2012 թ. ընտանիքով տեղափոխվում է ծննդավայր՝ հայրենի Քեսապի Գարատուրան գյուղ: Սակայն 2014 թ. մարտի 21-ին՝ Թուրքիայի հովանավորած իսլամիստ հակապետական ծայրահեղական խմբավորումների՝ Քեսապ ներխուժումից հետո, նա հարկադրված լքում է հայրենի Քեսապը և վերջնականապես հաստատվում Հայաստանում:

Դեռևս 2002 թ. Հ. Չոլաքյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել էր թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետագայում ատենախոսությունը հրատարակվում է առանձին գրքով՝ «Անտիոքի մերձակա Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» (հրատ. «Ռիթչըրտ և Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամ, թիւ 2, Անթիլիաս, 2006, 260 էջ): Հայաստան տեղափոխվելուց հետո վաստակաշատ գիտնական-մանկավարժը որպես ավագ գիտաշխատող ընդունվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժին: 2016 թ. Հ. Չոլաքյանը հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, ստանում պատմական գիտությունների դոկտորի աստիճան, դառնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար, իսկ մի քանի տարի անց՝ գլխավոր գիտաշխատող: Հ. Չոլաքյանի դոկտորական ատենախոսությունը հետագայում լրացվում ու ամբողջացվում է և տպագրվում առանձին գրքերով (տե՛ս Հ. Չոլաքյան, Քեսապ, հ. Ա., Հալէպ, 1995, 572 էջ, հ. Բ., Հալէպ, 1998, 568 էջ, հ. Գ., Հալէպ, 2004, 672 էջ):

2014 թ. ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնը բազմավաստակ լեզվաբան, արևմտահայերենով դպրոցական և բուհական տասնյակ դասագրքերի հեղինակ Հ. Չոլաքյանին հրավիրում է մայր բուհում արևմտահայերեն դասավանդելու: Համատեղությամբ նա մի քանի տարի աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնում:

Բազմարդյուն գիտնականը միայն 2014–2022 թթ. հայրենիքում հրատարակել է ազգագրական, լեզվաբանական, հուշագրական, պատմական, գրական-գեղարվեստական ու հրապարակախոսական ավելի քան 16 աշխատանք:

Հ. Չոլաքյանը եզակի գիտնական-մանկավարժ և գործող ուսուցիչ է, գիտական, տեսական-մանկավարժական աշխատանքը նա հաջողությամբ զուգակցել է դասավանդման ու դպրոցական և բուհական ձեռնարկների կազմման ու հրատարակման հետ: Նրա հեղինակած դպրոցական դասագրքերն ավելի քան երեք տասնամյակ գործածվում են սփյուռքահայ տարբեր համայնքների հայկական նախակրթարաններում ու միջնակարգ և երկրորդական դպրոցներում:

Բերիո թեմի ազգային առաջնորդարանի հովանավորությամբ Հ. Չոլաքյանի պատրաստած «Հայերէնի դասագիրքս»՝ Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ. (1990–1993 թթ.) 6 գրքերը և ուսուցչի ձեռնարկները բովանդակությամբ, մեթոդով, ձևով ու նպատակներով նորություն էին ոչ միայն սփյուռքում, այլև Հայաստանում: Այս շարքի Ա. և Բ. հատորները լրամշակվել և վերահրատարակվել են 2000 թ.: Իսկ միջնակարգ և երկրորդական կարգերի համար Հ. Չոլաքյանի պատրաստած գրականության և լեզվի «Անդաստան» ձեռնարկի Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ. (2009–2014 թթ.) 6 գրքերի շարքերում լեզվագիտությունն ու գրականությունը համընթաց ընթանում են մինչև 12-րդ կարգ:

1996 թ. Հ. Չոլաքյանը Հալեպում հրատարակության է պատրաստել «Հայերէնի դասընթացք» շարքը՝ բաղկացած չորս գրքից: Առաջինն ընդգրկում է հնչյունաբանություն և բառագիտություն, երկրորդը՝ ձևաբանություն, երրորդը՝ շարահյուսություն, չորրորդը՝ հայոց լեզվի պատմություն:

1986 թ. Հալեպում Հ. Չոլաքյանը հրատարակում է «Քեսապի բարբառը» աշխատությունը (370 էջ): Այս աշխատանքը մեծ արժեք ունի հայ բարբառագիտության բնագավառում, մանավանդ եթե նկատի առնենք այն փաստը, որ օրեցօր պակասում է այդ բարբառը կրողների ու դրանով հաղորդակցվողների թիվը: 2009 թ. այս նույն աշխատությունը, մասնակի փոփոխություններով, լույս է տեսնում նաև Երևանում:

Հ. Չոլաքյանն արժեքավոր աշխատություններ ունի նաև արևմտահայերենի ուսումնասիրության ոլորտում: Այսպես, 2000 թ. Հալեպում հրատարակել է «Հայերէնի աւանդական ուղղագրութիւնը», 2016 թ. Երևանում՝ «Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ և խնդիրներ)» աշխատությունները: 2017 թ. Երևանում լույս է տեսնում «Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ և խնդիրներ)» խորագրով առաջին գիրքը, իսկ երկրորդ գիրքը հրատարակվում է 2019 թ.: 2018 թ. Անթիլիասում լույս է տեսնում «Գործնական Արեւմտահայերէն» ձեռնարկը: 2018 թ., այս անգամ դարձյալ Երևանում, հրատարակվում է «Արևմտահայերէնի կանոնակարգման հարցեր (Չթեքուող խօսքի մասեր)» աշխատությունը:

Հ. Չոլաքյանի հարազատ կրթօջախ Հալեպի Քարեն Եփփե Ազգային ճեմարանը, որտեղ իր ուսուցչական գործունեության մեծագույն մասն է անցկացրել երևելի մանկավարժը, եղել ու մնում է նրա մանկավարժական գործունեության դարբնոցը: Նվիրական կրթօջախի նկատմամբ անանց սիրո ու երախտագիտության արժանի արտահայտությունն են 1997 թ. Հալեպում հրատարակված «Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի» պատկառելի հատորը (762

էջ) և 2001 թ. հրատարակած «Քարէն Եփփէ Հայ Գողգոթային և Վերածնունդին հետ» աշխատությունը:

2007 թ. Հալեպի Ազգային Սահակյան վարժարանի 80-ամյա հոբելյանի առթիվ Հ. Չոլաքյանը հրատարակում է «Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի» խորագրով գիրքը (606 էջ):

2011 թ. Քուվեյթում լույս է տեսնում նրա կազմած «Ոսկեմատեան Քուէյթի Ազգային Վարժարանի» ստվարածավալ (760 էջ) հատորը՝ նվիրված համբավավոր վարժարանի կեսդարյա հոբելյանին:

2021 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակում է Հ. Չոլաքյանի կազմած «Սուրիահայ Դպրոցի Պատմութիւն» երկհատոր աշխատանքը (համապատասխանաբար՝ 648 էջ և 608 էջ ծավալով), որում ներկայացված է հայաշատ Սիրիայի՝ շուրջ 110 հայաբնակ վայրերում գործող 240 ամենօրյա և դրանց կից՝ կիրակնօրյա, երեկոյան, գիշերային, արհեստի ու ամառային դպրոցների պատմությունը:

Հ. Չոլաքյանի գրական վաստակի արժեքավոր մաս են կազմում ազգագրական բնույթի աշխատությունները: Այս բաժնում լուրջ ներդրում է ծնունդավայր Քեսապի շրջանին նվիրված եռահատոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը լույս է տեսել Հալեպում 1995 թ. (572 էջ), երկրորդ հատորը՝ 1998 թ. (568 էջ), իսկ երրորդ հատորը՝ 2004 թ. (672 էջ): Այս եռապատումով նա ընթերցողին ծանոթացնում է իր հայրենի բնօրրան Քեսապի աշխարհագրությանը, պատմությանը, մշակույթին, ավանդություններին, քեսապցիների բարբառին, վարքուբարքին, սովորություններին, կենցաղին, խոհանոցին, տեսարժան վայրերին և այլն: Արժեքավոր այս հատորները երախտագետ Հ. Չոլաքյանի՝ տասնամյակներ տևած շարունակական պրպտումների, հանդիպումների, հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության ու հյութեղ լեզվով ներկայացնելու շնորհալի դրսևորումն են, որոնցով նա փրկել ու սերունդների սեփականությունն է դարձրել Քեսապի նյութական ու հոգեմտավոր բազմաշերտ ժառանգությունը՝ դրանով իսկ արժանանալով հայրենակիցների ու հայագետ-ազգագրագետների ջերմ սիրուն ու ակնածանքին:

1980 թ. Հ. Չոլաքյանը Հալեպում հրատարակում է «Քեսապի ժողովրդական երգարուեստը» պրակը, իսկ մեկ տարի անց՝ 1981 թ., «Ցամքած աղբիւրը նորէն կը բխի (Սարգիս Գապաղեանի պատումը Մուսա Լերան հերոսամարտի մասին)» գրքույկը: 1988 թ. Հալեպում լույս է տեսնում «Միջ-Գաւառական անեքթոտներ» գիրքը, որը հետագայում լրամշակվում ու վերահրատարկվում է դարձյալ Հալեպում 2005 թ.:

2015 թ. Անթիլիասում, որպես «Արևմտեան Հայաստանի և Կիլիկիոյ Յուշամատեաններ» մատենաշարի հերթական՝ 8-րդ հատոր, լույս է տեսնում «Քեսապ» ստվարածավալ աշխատանքը (1348 էջ):

2015 թ. Երևանում ընթերցողների դատին հանձնված «Քեսապի երեք օրերը (21–23 Մարտ 2014)» հրապարակախոսական գրքում հոբելյարը մանրամասնորեն ներկայացնում է հակակառավարական զինյալ ելուզակների՝ Քեսապի վրա հարձակումից հետո բնօրրանը հարկադրաբար լքած քեսապցի-

ների վիճակը և փախուստը դեպի Լաթաքիա: Նույն՝ 2015 թ., գիրքը թարգմանվում ու անգլերենով հրատարակվում է ԱՄՆ-ում:

2020 թ. Երևանում Հ. Չոլաքյանը հրատարակում է «Քեսապի նիւթական մշակոյթը» աշխատությունը: Նույն թվականին իր առաջաբանով ու ծանոթագրություններով Երևանում հրատարակում է Հակոբ Հանիյանի գրի առած «Օսմանեան բանակի զինուոր Սարգիս Հանիեանի վկայութիւնը» հուշագիրքը:

Այս տարի Երևանում տպագրվեց բազմաբեղուն Չոլաքյան գիտնականի առայժմ վերջին աշխատանքը՝ «Պատմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները» պատմաազգագրական մենագրությունը:

Թերևս գրականագետ հետազոտողները դեռ կանդրադառնան Հ. Չոլաքյանի գրական-գեղարվեստական ժառանգության ուսումնասիրությանն ու արժևորմանը: Նշենք միայն, որ հայ գրականության անդաստան նա ոտք է դրել իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուով, որը «Այսպէս սկսաւ գարունը» խորագրով լույս է տեսել Բեյրութում 1970 թ.: Արցախյան շարժմանն արձագանքելով՝ Հ. Չոլաքյանն ուսումնասիրել և 1990 թ. Հալեպում լույս է ընծայել «Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը» գրքույկը: Անհաշիվ է Հ. Չոլաքյանի՝ սփյուռքահայ ու հայաստանյան պարբերականներում հրատարակած գրական-գեղարվեստական հոդվածների, ակնարկների, բանաստեղծությունների, պատմվածքների, գրախոսությունների ու թղթակցությունների թիվը:

Մանկավարժական, բանասիրական և ուսուցչական-դասախոսական բազմազբաղ գործունեությունից անբաժան՝ գրականությունն ու գրականագիտությունը միշտ էլ Հ. Չոլաքյանի առօրյայի մասն են կազմել: Սփյուռքում Հ. Չոլաքյանը եղել է հայ գրողների հոբելյանական հանդիսությունների փնտրված ատենաբան-բանախոսը: Նա իր ելույթներով, հոդվածներով ու մենագրությամբ հանրությանն է ներկայացրել գրական որոշ շրջանակների (Սիրիա, Լիբանան, Կ.Պոլիս, Արցախ) հայ գրականության առօրյան («Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը»):

Հ. Չոլաքյանի ու նրա հրատարակած գրքերի մասին գրվել են շուրջ 80 հոդվածներ և գրախոսություններ, ասվել գնահատանքի խոսքեր:

2022 թ. 75-ամյա Հ. Չոլաքյանը, մայր բուհում իր ուսուցչական գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն անելուց հետո, անցել է վաստակած հանգստի, թեև այդ հանգիստ ասածը ամենևին էլ Հ. Չոլաքյանի պես պրպտուն ու եռանդուն գիտնական-մանկավարժի համար չէ: Նա, նախկինի համեմատ, ավելի պակաս ծանրաբեռնվածությամբ, այնուամենայնիվ շարունակում է գիտամանկավարժական գործունեությունը՝ իր հանգիստը համարելով հայությանը, հայկական կրթօջախներին ու հայագիտությանը մինչև վերջ անմնացորդ ու անձնվիրաբար ծառայելը: Հ. Չոլաքյանն այժմ էլ, գիտական աշխատանքային գործունեությանը զուգահեռ, շարունակում է առկա և առցանց եղանակով մանկավարժական բուռն գործունեություն ծավալել: Նա լեզվի ուսուցման տեսամեթոդական ու գործնական հեռավար դասընթացներ ու խորհրդատվություններ է անցկացնում սփյուռքի հայկական մի շարք գաղթո-

ջախների կրթարանների ուսուցչական խմբերի հետ, նրանց հետ անցկացնում վարպետաց (օրինակելի, տիպար) դասեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ մասնակցելով նաև հայոց լեզվի ուսուցմանը, հայեցի դաստիարակությանն ու հայ դպրոցին նվիրված գիտաժողովներին՝ հանդես գալով ուսուցման զանազան հարցերին նվիրված հոդվածներով:

Հ. Չոլաքյանի մասնակցությամբ վերջին գիտաժողովներից է 2022 թ. դեկտեմբերի 6–7-ը Բեյրութի Հայկազյան համալսարանում կայացած գիտաժողովը, որը կրում էր «Արաբական Ծոցի երկիրներու հայերը (Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Եմէն, Պահրէյն, Սէուտ. Արաբիա, Քաթար, Քուէյթ, Օման)» խորագիրը: Դեկտեմբերի 6-ի նիստում Հ. Չոլաքյանը ներկայացրեց «Քուէյթի հայօճախին կազմաւորումը» թեմայով իր շահեկան զեկուցումը:

Մեծ բարեբախտություն ու պատիվ ենք ունեցել 2015 թ. ծանոթանալու և մոտիկից շփվելու մեծանուն ուսուցչի հետ: Որպես Երևանում կազմակերպվող սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման դասընթացների համակարգող, 2–3 տարի շարունակ հնարավորություն եմ ունեցել որպես ազատ ունկնդիր ներկա լինելու Հ. Չոլաքյանի վարած արևմտահայերենի դասերին ու վայելելու նրա հոգեպարար արևմտահայերենը: Դասերից հետո Հ. Չոլաքյանը սիրահոժար ու անտրտունջ պատասխանում էր բոլոր հարցերին, լրացուցիչ մեկնաբանություններ ու խորհուրդներ տալիս: Նրա շնորհիվ կարողացանք բավարարել արևմտահայերենին ու արևմտահայերենով հաղորդակցվելու մեր պահանջը և գոնե մասամբ դրան տիրապետելու ձգտումները:

Մայր հայրենիքը, բարձր գնահատելով հայրենադարձ սփյուռքահայ բազմավաստակ մտավորականի մանկավարժական և գիտական գործունեությունը, 2010 թ. նրան պարգևատրել է ՀՀ վարչապետի Պատվո հուշամեդալով, իսկ 2011 թ.՝ ՀՀ նախագահի «Մովսես Խորենացի» շքանշանով:

Սակայն Հ. Չոլաքյան մտավորականի համար ամենամեծ կոչումը «Ուսուցիչ ըլլալն է»: Նա իրավամբ վաստակել է այդ կոչմանն արժանի լինելու իր անկապտելի իրավունքը:

Մեծարգո մանկավարժ, ուսուցիչ, մտավորական ու գիտնական, հայագետ Հակոբ Չոլաքյանին շնորհավորելով 75-ամյա վաստակած հոբելյանի առիթով՝ մաղթում ենք արևշատություն և քաջ առողջություն: Ցանկանում ենք, որ այսուհետ ևս երիտասարդական ավյունով շարունակի իր ազգանվեր գործունեությունը՝ ի նպաստ արևմտահայերենի և հայ դպրոցի, մշակույթի ու գիտության զարգացման ու հարատևման:

Արման Մալոյան, *պ. գ. թ.*
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5